# ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետությունում դատված չլինելու/լինելու մասին տեղեկանք ստանալու վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետությունում դատված չլինելու/լինելու մասին տեղեկանք ստանալու նպատակով հարկավոր է ներքոհիշյալ հասցեով.

AL, AR, CT, DC, DE, FL, GA, IA, IL, IN, KS, KY, LA, MA, MD, ME, MI, MN, MO, MS, NC, ND, NE, NH, NJ, NY, OH, OK, PA, PR, RI, SC, SD, TN, TX, VA, VI, VT, WV, WI նահանգներում / տարածքնե-րում մնակվող / գտնվող ՀՀ քաղաքացիները՝

Consular Section, Embassy of Armenia to the United States
2225 R Street, NW,
Washington, DC 20008
Հեռ. (202) 319-2983
Ֆաքս. (202) 319-8330
Էլ. փոստ. armconsul@speakeasy.net

ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. սահմանված ձևի դիմում /կցվում է/ (***ծառայողական նշումներ մասը չլրացնել*** )
2. անձնագրի ամբողջական պատճենը
3. 2 գունավոր միանման լուսանկար
4. ԱՄՆ-ում գտնվելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը՝ վավերացված նոտարի կողմից (եթե անձնագրից դուրս է)
5. Հյուպատոսական գանձում **$67** money order / certified check payable to theEmbassy of Armenia

Ծանոթագրություն.

Սույն հյուպատոսական ծառայությունը կատարվում է 15 - 20 օրում:
Տեղեկանքից հրաժարվելու դեպքում վճարված պետական տուրքը չի վերադարձվում:
Ծառայության կատարման ժամկետները, պահանջները և պետական տուրքի չափը ենթակա են փոփոխման առանց զգուշացման:
Հարցաթերթիկը պետք է լրացնել ամենայն մանրամասնությամբ և ընթեռնելի ձեռագրով:
Փաստաթղթերը փաստով ուղարկելու դեպքում պահանջվում է նաև որևէ պատվիրած փոստի նախապես վճարվածհետադարձ ծրար , որն ունի որոնման համար / registered mail with a tracking number / կամ $ 20 առանձին money order / certified check payable to the Embassy of Armenia/ դեսպանության կողմից փաստաթղթերը FedEx ծառայությամբ վերադարձնելու համար:

**Դեսպանությունը պատասխանատվություն չի կրում փոստային ծառայության մեղքով կորած փաստաթղթերի համար:**

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար կարող եք զանգահարել վերը նշված հեռախոսահամարով ժ. 10.00-ից մինչև 12.00 յուրաքանչյուր աշխատանքային օր բացի չորեքշաբթի օրերից կամ ուղարկել էլեկտրոնային հարցում:

Ձև N 1

ՀՀ արտաքին գործերի նախարարության
աշխատակազմի հյուպատոսական վարչություն

# Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ տրամադրել Հայաստանի Հանրապետությունում դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանք: Ստորև ներկայացնում եմ անհրաժեշտ տվյալները.

| | | |
|---|---|---|
| 1. | Ազգանուն | |
| 2. | Անուն | |
| 3. | Հայրանուն | |
| 4. | Ծննդյան ամսաթիվ | տարի ամիս օր |
| 5. | Ծննդավայրը | |
| 6. | Հաշվառման հասցեն | |
| 7. | Ինչ նպատակով է ստուգվում | -ի իշխանություններին տեղեկանք ներկայացնելու նպատակով |
| 8. | Հեռախոսահամարը (ըստ ցանկության) | |
| 9. | Էլեկտրոնային փոստի հասցեն (ըստ ցանկության) | |

Դիմող ________________ ________________________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ ________________ 20 թ.